ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՄԱԺԵՎ ՍՊԸ-ն ՍՄՍՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	I-Plast LTD	I-Plast	1100L	I-Plast	Պլաստմասե աղբարկղ 1100L Ծավալը՝ 1100լ Երկարությունը՝ 1260 մմ ±5% Երկարությունը ներառյալ աղբատարի մանիպուլյատորի համար նախատեսված բռնակները՝ 1377 մմ ±5% Խորությունը՝ 1077 մմ ±5% Բարձրությունը՝ 1369 մմ ±5% Քաշը՝ 50 կգ ±5% Բեռնատարողությունը առանց աղբարկղի քաշի՝ առնվազն 440կգ Գույնը՝ կանաչ Անիվների տրամագիծը՝ 200 մմ Գործարանային երաշխիքը՝ 1 տարի Աղբարկղի նկարագրությունը՝ Կառուցվածքը, պարամետրերը և անվտանգության

						պահանջները պետք է համապատասխանեն EN 840, RAL-GZ 951, ISO 9001 և ISO 14001 ստանդարտների պահանջներին: Նյութը՝ բարձր խտայնության ցածր ճնշման առաջնային հումքի (HDPE) պոլիէթիլեն: Աղբարկղի իրանի բոլոր պատերը պետք է ունենան ուղղահայաց առնվազն երկու ամրության գոտիներ՝ աղբարկղի կառուցվածքը ամրապնդելու համար: Աղբարկղը պետք է տեղակայված լինի շարժական 4 անիվների վրա, որոնք պետք է ամրացված լինեն կոնտեյների կաղապարի հետ մետաղական կոնստրուկցիայի միջոցով: Անիվների նյութը՝ պետք է լինի բարձր խտայնության պոլիէթիլենից, սև գույնի, իսկ անվադողերի նյութը՝ ռետինե, բարձր խտայնության - 200 մմ տրամագծով: Անիվներից 2-ը պետք է ունենան արգելակման համակարգ: Անիվները պետք է պտտվեն ուղղաձիգ առանցքի շուրջ: Անվադողերը /անիվները/ պետք ունենան փոխարինման հնարավորություն: Աղբատարի մանիպուլատորի բռնիչի համար

						նախատասված կողային բռնակները պետք է ամրացված լինեն աղբարկղի իրանին առնվազն 11 կետում, յուրաքանչյուր կողմից /աջ և ձախ հատվածներում/: Աղբարկղը պետք է ունենան լրացուցիչ ամրացնող կառուցվածք՝ աղբատարի մանիպուլյատորի բռնիչի համար: Աղբարկղը ունի ոչ պակաս երկու ծխնիների միջոցով բացվող մեծ կափարիչ, որն ունի բացելու համար նախատեսված առնվազն երկու բռնակ, գույնը կանաչ: Մեծ կափարիչի մեջ առկա է փոքր էրգոնոմիկ կափարիչ, որն ունի բացելու համար նախատեսված առնվազն մեկ բռնակ, գույնը՝ դեղին (կամ պատվիրատուի համաձայնությամբ կարող է լինել ուրիշ գույնի), չափերը՝ երկարությունը 820-900 մմ, լայնությունը՝ 300-440 մմ: Աղբարկղը պետք է ունենա վավեր ISO 9001, ISO 14001, RAL-GZ 951 և EN 840 ստանդարտներին համապատասխանության սերտիֆիկատներ, որոնց ներկայացումը մատակարարման ժամանակ պարտադիր է: EN 840

						ստանդարտին համապատասխանության սերտիֆիկատի մեջ պետք է հստակ արտացոլված լինի սերտիֆիկացնող մարմնի կողմից փորձարկման ենթարկված ապրանքների քանակը, դրանց ծավալը, քաշը, բեռնատարողությունը, չափերը, օգտագործված նյութը, անիվների տրամագիծը: Առավելագույն թույլատրելի շեղումները աղբարկղերի պարամետրերում կազմում է ±5%: Նշված շեղումները չեն թույլատրվում աղբարկղերի ծավալների նկատմամբ՝ ծավալը պետք է լինի առնվազն 1100լ: Նախքան ապրանքի մատակարարումը մատակարարը պարտավոր է պատվիրատուին ներկայացնել նմուշ: Նմուշը հաստատելուց հետո մատակարարել: Հաստատված նմուշը կնվազեցվի մատակարարման եթակա քանակից: Նմուշի հաստատման ու մատակարարման ընդհանուր քանակները պետք է իրականացվեն պայմանագրով սահմանված մատակարարման

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ՄԱԺԵՎ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍՄՍՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3					

ժամանակացույցով: Մատակարարումը և աղբամանների տեղադրումը իրականացվելու է մատակարարի կողմից՝ Սիսիան խոշորացված համայնքի տարբեր բնակավայրերում: Ապրանքի տեխնիկական պայմանների ակնհայտ անհամապատասխանության առկայության դեպքում, պատվիրատուի պատահական ընտրությամբ մեկ հատ մատակարարի հաշվին պետք է ենթարկվի ՀՀ պետական փորձաքննության և պատվիրատուին ներկայացնի փորձաքննության եզրակացություն առաջարկվող ապրանքը վերոհիշյալ տեխնիկական պայմանների համապատասխանության վերաբերյալ: Աղբարկղը պետք է լինի նոր 2025թ., արտադրության նախկինում չօգտագործված և չվերանորոգված: Մատակարարը ինքը պետք է բերի և տեղադրումը կատարի Սիսիան համայնքում պատվիրատուի կողմից նշված վայրերում: